

# ՎՐԱՍՏԱՆ

«ՅՐԱՆԹԱՆԸ» (ՆԱՅՔՐՈՒՄՅՈՒՄ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 17 - 18 (16922) ՇԱԲԱԹ 6 ՄԱՐՏԻ 2021 Թ. ԳԻՆԸ 40 ԹԵՐԻ

## ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ - ՎՐԱՍՏԱՆ

### ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐ ԿՈՂՄԵՐԻՆ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԵԼ ԻՆՏԵՆՍԻՎ, ՈՐՊԵՍՋԻ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՉԵԶՈՔԱՑՎԻ

Փետրվարի 28-ից մարտի 1-ը, երկօրյա պաշտոնական այցով, Թբիլիսիում էր գտնվում Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը:

Այցի շրջանակներում, Եվրոպայի խորհրդի նախագահը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեի, քաղաքական կուսակցությունների ղեկավարների հետ, եղավ Ցխինվալիի տարածաշրջանի կուրվալեթի գյուղի մերձակայքում գտնվող բռնազավթված գծի մոտ, մասնակցեց Վրաստանում Եվրամիության ներկայացուցչության նոր գրասենյակի բացմանն ու ծանոթացավ Եվրամիության կողմից ֆինանսավորվող նախագծերին:



(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՀԱՅԱՍՏԱՆ

### ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՈՒԹԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԴԱՐԱԳԱՅՈՒՄ ԴԱՏՐԱՍ ՏԵՔ ԳՆԱԼ ԱՐՏԱՅԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»

Մատի 1-ին Երեւանի Հանրապետության հապարակում անցկացված հանրահավաքին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ պատրաստ են գնալ արտահերթ խորհրդարանական ընտրությունների, եթե առաջարկն ընդունվի խորհրդարանական ուժերի կողմից:



- Արտահերթ ընտրությունների վերաբերյալ մեր ձեռակերպած առաջարկը խորհրդարանական ուժերի կողմից ընդունվելու պարագայում, մենք կհամաձայնվենք արտահերթ խորհրդարանական ընտրությունների, որովհետև համոզված ենք, որ մեր ժողովուրդն իր ազատ կամարտահայտմամբ ի վիճակի է Հայաստանում հաստատել օրինական իշխանություն,- Ե՛լե՛ք նա: Վարչապետը հավելեց, որ ընդ-

դիմադիրներն օգտագործել են բոլոր հնարավորություններն ի ցույց դնելու, որ ժողովուրդը պահանջում է իր հրաժարականը: - Նրանք չկարողացան դա անել, ես տալիս եմ երկրորդ հնարավորությունը եւ նետում եմ այս մարտահրավերը, եկեք գնանք ժողովրդի առջև նոր ընտրության, տեսնենք, թե ում հրաժարականն է պահանջում ժողովուրդը,- Ե՛լե՛ք նա: (Շարունակությունը՝ 7-րդ էջում)

## ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

### ԻՐԱԿԻ ԴԱՐԻՔԱՇՎԻԼԻ. «ԱՐՏԱՅԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՄԱՆ ԿԱՌՎԱՐՈՂ ԹԻՄԻ ՀԱՄԱՐ ԿԱՐՄԻՐ ԳԻԾ Է»

Մեկնաբանելով Եվրոպայի խորհրդի նախագահի մասնակցությամբ կառավարող թիմի եւ ընդդիմության ներկայացուցիչների համդիպման արդյունքները՝ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հայտարարեց, որ կառավարող թիմը գործում եւ գործելու է միայն՝ ելնելով երկրի, ժողովրդի շահերից եւ ոչ թե ինչ-որ կոնկրետ կուսակցության անձնական քնահաճույքից կամ շահերից:

- Եթե կողմերը ցանկանում են սկսել իրական երկխոսություն, մենք բացել ենք համապատասխան ձեռնարկներ: Իմ դիրքորոշումն այն էր, որ մենք չպետք է միջամտենք եւ չէինք կարող միջամտել օրենքի կատարմանը:

Եւ հրապարակավ հայտարարել: Հարցը վերաբերում էր Մեկնաբանությանը: Իմ դիրքորոշումն այն էր, որ մենք չպետք է միջամտենք եւ չէինք կարող միջամտել օրենքի կատարմանը: (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

### ՍԿՍՎԵՅ ԸՆՏՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Մատի 4-ին խորհրդարանում անցկացվեց ընտրական բարեփոխման հետ կապված աշխատանքային խմբի համդիպումը: Նիստին ներկա էին միջազգային եւ տեղի կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ ԿԸՀ-ի ղեկավարությունը:

Նոր ընտրական բարեփոխման նախաձեռնությունը կկայանա մարտի 8-ի բյուրոյի նիստին: Ընտրությունների փոփոխված նոր վարչակազմը համալրված կլինի բոլոր մակարդակներում: ԿԸՀ-ն կազմված կլինի 17 անդամ-

մից, որից 8-ը կընտրվեն մասնագիտական հիմունքներով, 9-ը կառաջադրվեն ընտրական շեմն անցած կուսակցությունների կողմից, եւ յուրաքանչյուր կուսակցություն կունենա 1 ներկայացուցիչ: (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

### Ի.ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՃԱՌԼ ՄԻՇԵԼԻ ԱՅՅԸ ԶՈՒՅՅ Է ՏԱԼԻՍ, ՈՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՁՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ»



Մարտի 1-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին առանձնազրույց ունեցավ Վրաստանում պաշտոնական այցով գտնվող Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հետ:

Զրույցը հիմնականում վերաբերում էր Արեւելյան գործընկերության ձեռնարկի կարելիությունը եւ առաջիկա գազաթափողի ընթացքում քննարկվելիք հարցերին: Ընդգծվեց Վրաստանի՝ որպես Եվրամիության ասոցիացված երկրի հաջողությունը:

Հանդիպմանը քննարկվեց նաեւ COVID-19 համավարակի ուղղությամբ Վրաստանի (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

### ՆԱԽԱԳԱԶԻ ՆՍԱՎԱՅՐՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴՊԻՄՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Մարտի 1-ին, Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու, Վրաստանում Եվրամիության դեսպան Կառլ Հարցելի մասնակցությամբ, Վրաստանի նախագահի նստավայրում, Օրբելիանիների պալատում, կայացավ իշխանության եւ ընդդիմության ներկայացուցիչների համդիպումը:

Հանդիպմանը ներկա էին ընդդիմությունից Իրմա Ինձալիլին («Հայրենասերների ալյանս»),

Գիգա Բոկերիան, Դավիթ Բաքրաձե («Եվրոպական Վրաստան»), Սալոմե Սամադաշվիլին («Ազգային

չարժում»), Ալեկո Էլիսաշվիլին («Քաղաքացիներ»), Մամուկա (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

### «ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

100 ՏԱՐԵԿԱՆ ԻՄ ԹԲԻԼԻՍՅԻ ԸՆԿԵՐ...



(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

Լույս դառնա հոգիները նրանց, ովքեր ծնունդ տվեցին ու շարունակություն քո կյանքին, երկար ու ձիգ տարիներ նրանց, ովքեր այսօր հանուն քո երկարակեցության անուն են անհնարին՝ ի դեմս քո «հոր»՝ գլխավոր խմբագիր Վան Բաթրոբյանի ու նաեւ

«ՎՐԱՍՏԱՆ», ԱՊՐԻՐ ԱՆԽՈՆՋ ՈՒ ԱՆԵՐԵՐ

Այժմ, երբ ողջ վիրահայությունը (ոչ միայն) սիրով նշում է «Վրաստան» թերթի 100-ամյա հոբելյանը, ջերմությամբ միանում են բոլոր-բոլորի լավագույն մարդանբներին՝ միաժամանակ նշելով Ձեր որպես թերթի երկարամյա արհեստավար խմբագրի, անուրանալի դերն



(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՊԱՏՈՒԹՅՈՒՆ - ԵԿԵՂԵՑԻ

«ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԱՍՑԵԻՆ ԶՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԵՆ ՈՒ ՀԱԿԱՊԵՏԱԿԱՆ»

Մարտի 2-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին այցելեց Վրաց Ուղղափառ եկեղեցու Պատրիարքարան, որտեղ հանդիպում ունեցավ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ:

Հանդիպման ավարտին վարչապետը հայտարարեց, որ Պատրիարքի հասցեին եղել են անճախադեպ զրպարտություններ, որոնք անընդունելի են ու հակապետական:

Նրա խոսքով, այսօրվա հանդիպումը ակնածամբ ու խոնարհությամբ է հայտնում Պատրիարքի, եկեղեցու և Պատրիարքարանի հանդեպ:

- Ինձ համար միշտ մեծ երջանկություն ու պատիվ է հանդիպել Նորին Արքայապետին՝ մեր Պատրիարքին: Այսօրվա հանդիպմանը ես մեկ անգամ ես ար-

տահայտում եմ մեր մեծ հարգանքն ու սերը Պատրիարքի, ամբողջ եկեղեցու և Պատրիարքարանի հանդեպ: Ինչպես գիտեք, այսօր մարտահրավերներով լի ժամանակ է: Մենք ականատես ենք եղել եկեղեցու և Պատրիարքի հասցեին անճախադեպ հարձակման, տեսել ու լսել ենք անճախադեպ զրպարտություններ, որոնք անընդունելի են, հակապետական են ու թշնամական և չեն ծառայում մեր ժողովրդի, եկեղեցու շահե-



րին: Որպես կառավարության ղեկավար ես խոստացա իմ լիակատար աջակցությունը եկեղեցուն՝ վերահաստատելով իմ համեստ հարգանքն ու սերը,- ասաց Իրակլի Դարիբաշվիլին:



ԱՄՆ ԾՐԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՄԱՄԻՋՈՑՆԵՐ ՈՒՄԱՍԱՏԱՆԻ ԴԵՄ

Ալեքսեյ Նավալնու գործի կապակցությամբ, Ջո Բայդենի վարչակազմը ծրագրում է պատժամիջոցներ Ռուսաստանի դեմ: Ընդ որում, պատժամիջոցների սահմանումը նախատեսված է Եվրամիության հետ համակարգմամբ:

Նշենք, որ դա Բայդենի վարչակազմի կողմից Ռուսաստանի դեմ առաջին պատժամիջոցն է լինելու, ինչը, բնականաբար, ազդեցություն կգործի երկու երկրների հարաբերությունների վրա:

ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ԸՆՏՐՈՒԿԱՆ ՀԱՍՏԱԿՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՄՈՒՄ

ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը մարտի 3-ին ընդունել է օրինագիծ ամերիկյան ընտրական համակարգի որոշ դրույթների բարեփոխման մասին: Նախաձեռնության օգտին արտահայտվել է 220, դեմ է քվեարկել 210 կոնգրեսական:

Օրինագիծը, բացի նախատեսվածից, Նահանգների իշխանություններին պարտավորեցնում է բնակիչներին ընձեռել փոստով քվեաթերթիկներ ստանալու հնարավորություն, ինչպես նաև վաղաժամկետ քվեարկություն ընտրություններից 15 օր առաջ եւ լրացուցիչ միջոցների տրամադրում ընտրությունների հետ կապված արտաքին սպառնալիքների դիմակայման համար:

ՖՐԱՆՍԻԱ ԵՐԵՔ ՏԱՐՎԱ ԱԶՏԱԶՐԿՈՒՄ ՆԻԿՈՒՅԱ ՍԱՐԿՈՋԻՆ

Ֆրանսիայի նախկին նախագահ Նիկոլայ Սարկոզին դատապարտվել է երեք տարվա ազատազրկման կոռուպցիայի եւ ազդեցության չարաշահման համար: Սարկոզին մեկ տարի կանցկացնի տնային կալանքում եւ երկու տարի՝ պայմանական ազատազրկման մեջ:

Դատարանը նույն պատիժը սահմանեց Սարկոզիի փաստաբան Թիերի Դյուկի, ինչպես նաև դատավոր Ժոզե Լոպեսի համար: Նրանք մեղադրվել են մասնագիտական գաղտնիքը տարածելու մեջ:

Դատարանի որոշմամբ, Սարկոզին տնային կալանքի ժամանակ ստիպված կլինի էլեկտրոնային ապարանջան կրել: Նախկին նախագահը, հավանաբար, կբողոքարկի որոշումը: Սարկոզին մեղադրվում էր դատավորին կաշառելու եւ նրան Մոնակոյում հեղինակավոր աշխատանք առաջարկելու մեջ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԿԱՆԱ ԿԱԼԱՋԵ. «ԲԻԶՆԵՍԻ ՀԵՏԵՎՈՒՄ ՄԱՐԴԻԿ ԵՆ, ԸՆՏԱՆԻՔՆԵՐ, ՈՒՄ ԱՆՅՐԱԺԵՇՏ Է ՕԳՆԵԼ»



Մարտի 4-ի Վրաստանի կառավարության հերթական նիստում վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հայտարարեց, որ Թբիլիսիում կմեկնարկի փոքր եւ միջին ձեռնարանային բիզնեսի սուբսիդավորման ծրագիրը:

Նրա խոսքով, վերոնշյալ նախաձեռնությունը պատկանում է մայրաքաղաքի քաղաքապետ Կախա Կալաձեին: Նախաձեռնության համաձայն, օբյեկտների ֆինանսա-

թյուն հայտնեց Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլուն, քաղաքապետարանի կողմից մշակված նախաձեռնությանը սատարելու համար: Նրա խոսքով, համավարակը խիստ ազդել է տնտեսության շատ ճյուղերի, ներառյալ՝ ձեռնարանային բիզնեսի վրա, որն աջակցության կարիք ունի:

- Մենք պետք է աջակցենք միմյանց եւ կարողանանք հնարավորինս խնայել որոշակի ուղորտներ: Այս բոլոր բիզնեսների հետեւում մարդիկ են, ընտանիքներ եւ նրանք օգնության կարիք ունեն: Միաժամանակ, բացի կանոնակարգի պարզեցումից, պետք է մոռանալ, որ անհրաժեշտ է պահպանել առողջապահության մասնագետների հանձնարարականները, անվտանգության նորմերն ու կրել պաշտպանիչ դիմակ,- հայտարարեց Կախա Կալաձեն:

կան օգնությունը սահմանվել է 5000 լարի, մինչդեռ մեկ իրավաբանական անձի կողմից շահագործվող մեկից ավելի ձեռնարանների ֆինանսավորումը կազմում է 10 000 լարի:

Ֆինանսավորում կստանան մինչեւ 2020 թվականի նոյեմբերի 28-ը գրանցված բոլոր օբյեկտները: Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն շնորհակալու-

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՍԿՍՎԵՅ ԸՆՏՐՈՒԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՇԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ԿԸՀ նախագահի նախաձեռնությամբ ընտրության կարգն ամփոփու է: Այն ընթացակարգ է գաղտնի քվեարկությամբ, ԿԸՀ անդամների երկու երրորդի կողմից՝ նախագահի առաջարկությամբ եւ խորհրդարանի կողմից ընտրված ԿԸՀ անդամների մասնակցությամբ:

Օրինագծի համաձայն, 365 ընտրատեղամասերի վերահաշվարկի պարտավորություն կա: Մասնավորապես, ըստ նախագծի, տեղամասերի ընդհանուր թվի առնվազն 10 տոկոսը պետք է վերահաշվարկվի: Այս վերահաշվարկի հետ մեկ-

տեղ, շրջանային ընտրական հանձնաժողովն իրավասու կլինի որոշում կայացնել տեղամասային ընտրական հանձնաժողովից ստացված փաթեթները բացելու եւ քվեաթերթիկների վերահաշվարկի համար:

Ինչ վերաբերում է ինքնակառավարման մարմինների ընտրություններին, ապա ինքնակառավարվող քաղաքներում սակրեբուլոյի ընտրությունները կանցկացվեն չորս/մեկ հարաբերակցությամբ համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերի միջեւ, իսկ ինք-



նակառավարվող համայնքում՝ երկու/մեկ հարաբերակցությամբ:

«ԳՅՈՒՂԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ»

ՆԻՆՈՃՄԻՆԴԱՅԻ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ ՀՍՏԱԿԵՑՎՈՒՄ ԵՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նինոծմինդայի մունիցիպալիտետի գյուղերում շարունակվում են հանդիպումները «Գյուղի աջակցության ծրագրով» ֆինանսավորվող նախագծերի ընտրության հարցով:



Մունիցիպալիտետի քաղաքապետ Անի Մոսոյանի, սակրեբուլոյի նախագահ Վահան Արոյանի, առաջին փոխքաղաքապետ Ալեքսանդր Միքելաձեի, սակրեբուլոյի պատգամավոր Սամվել Դարբինյանի, Յեշտիայի վարչական միավորում քաղաքապետի ներկայացուցիչ Եգոր Քոթոյանի մասնակցությամբ, մարտի 1-ին հանդիպում անցկացվեց վերոնշյալ վարչական միավորում ներգրավ-

ված Յեշտիա, Թորիա, Ուչմանա եւ Ղաուրմա գյուղերի բնակիչների հետ: Հանդիպմանը Յեշտիա գյուղի բնակիչներն առաջնահերթային համարեցին անառային արտոսվայրում գտնվող ֆերմայի կտուրի վերանորոգումը, թորիացիները՝ անասնագոմի մոտ խմելու ջրի համակարգի անցկացումը, ուչմանացիները՝ գերադասությունը տվեցին մարզադահլիճի հիմքերի ամրացմանը, իսկ Ղաուրմայի բնակիչները կարելուցեցին անասնագոմներում խմելու ջրի անցկացումը:

Նինոծմինդայի քաղաքապետ Անի Մոսոյանի, սակրեբուլոյի պատգամավորներ Վրեժ Մուրադյանի, Գրիգոր Շամիլյանի, Ենթակառույցների ծառայության մասնագետ Արարատ Դարբինյանի ու Գոնդուրայի վարչական միավորում քաղաքապետի ներկայացուցիչ Յոզիաննես Գրիգորյանի մասնակցությամբ, մարտի 2-ին նման հանդիպում կայացավ նաև վերոնշյալ վարչական միավորումում ընդգրկված Մեծ Գոնդուրա, Փոքր Գոնդուրա, Դիլիֆ, Ղուլալիս, Մամծվարե գյուղերի ներկայացուցիչների հետ:

Հանդիպման արդյունքում, Մեծ Գոնդուրայի

բնակիչները առաջնահերթություն տվեցին անասնագոմներում խմելու ջրի հիմնախնդրի կարգավորմանը Փոքր Գոնդուրայում, ջրատար խողովակների փոփոխմանը, ջրավազանի վերանորոգմանը, Դիլիֆում ջրանցքների մաքրմանը, Ղուլալիսում՝ դրսի լուսավորության կարգավորմանը, իսկ Մոնծվարե գյուղում՝ ոռոգման համակարգի կարգավորմանը:

ՍՐԲՈՒՅԻ ՍԱՆԱՄՅԱԼ

Նինոծմինդայի մունիցիպալիտետի քաղաքապետարանի կազմակերպչական բաժնի պետ



Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԻՐԱԿԻ ԴԱՐԻՔԱՇՎԻԼԻ. «ԱՐՏԱՅԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԹԻՄԻ ՀԱՄԱՐ ԿԱՐՄԻՐ ԳԻԾ Է»


(Սկիզբը՝ 1-ին էջում)

Երկրորդ հարցը ընտրական բարեփոխումների լիակատար պատրաստականությունն էր, մենք արդեն սկսել ենք կոնկրետ քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ, այն ներառում է լայնածավալ բարդ հարցեր՝ հետագա ճշգրտման, ընտրա-

կան բարեփոխումների բարելավման համար, սա վերաբերում է տեղական ընտրություններին, հաջորդ խորհրդարանական ընտրություններին:

Երրորդ հարցը արտահերթ ընտրությունների մեր սկզբունքային դիրքորոշման անփոփոխությունն է, սա կարմիր գիծ է, սա այն հարցն է, որը

չի քննարկվելու: Երեկ ես դա արձանագրեցի նաև հանդիպման ժամանակ: Արտահերթ ընտրություններ պահանջելու օրինական հիմք չկա: Մենք պետք է կարողանանք աշխատել միասնական խորհրդարանում՝ երկիրը բնականոն քաղաքական կյանք վերադարձնելու համար:



ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ ԿԱԶՄԵԼ Է 11,5 ՏՈՒՆՈՍ

Ազգային վիճակագրության ծառայության նախնական գնահատման համաձայն, 2021 թվականի հունվարին, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ, իրական համախառն ներքին արտադրանքի (ՀՆԱ) անկումը կազմել է 11,5 տոկոս: Անկում է նկատվել հետևյալ գործունեության մեջ. շինարարություն, տրանսպորտ եւ պահեստավորում, մշակվող արդյունաբերություն, մշակույթ, զվարճանք եւ հանգիստ, անշարժ գույքի հետ կապված գործունեություն, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի ու ջրի էներգիայի, մատակարարում, մեծածախ եւ մանրածախ առևտուր, ավտոմոբիլների եւ մոտոցիկլետների նորոգում:

Աճ է նկատվել տեղեկատվության եւ հաղորդակցության, ֆինանսական եւ ապահովագրական գործունեության ոլորտներում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԻ ԴԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ԹՈՒՐՔԻԱ



Մարտի 3-ին Վրաստանի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Դավիթ Զակալիանին պաշտոնական այցով գտնվում էր Թուրքիայում:

ունեցավ իր թուրք գործընկեր Մելուք Զավուշոզլուի, Թուրքիայի փոխնախագահ Փուաթ Օքթայի հետ: Դավիթ Զակալիանին ծաղկեպսակ դրեց Անկարայում Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի գերեզմանին:

Հանդիպումներին կողմերը քննարկեցին երկկողմ հարաբերություններին, սեփական տարածաշրջանի անվտանգությանը, կողմերի միջև տարածաշր-

ջանում վերջին զարգացումների պայմաններում դիրքորոշումների սերտ համակարգմանն ու դիրքորոշումների հաշտեցմանն առնչվող հարցեր:

Ընդգծվեց, որ այցը լավ հնարավորություն է կողմերի համար քննարկելու բոլոր հիմնական ոլորտները, որոնք արդիական են ոչ միայն երկկողմ հարաբերություններում, այլ նաև տարածաշրջանային համատեքստում:

ԿՐԹԱԿԱՆ



ՍԿՍԿԵԼ Է ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը սահմանել է առաջին դասարանցիների գրանցման վերջնաժամկետները:

2021-2022 ուսումնական տարվա առաջին դասարան կարող են գրանցվել նրանք, ովքեր մինչև սեպտեմբերի 15-ը ներառյալ դառնում են 6 տարեկան:

Գրանցման առաջին փուլում 2021 թվականի մարտի 15-26-ը, կգրանցվեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները:

Առաջին փուլում ընդգրկված երեխաների ծնողները պետք է դիմեն նախընտրելի հանրակրթական դպրոց: Դպրոցի ղեկավարությունը երեխային կգրանցի Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում (EMIS): Հատուկ կրթական անհրաժեշտությունը հաստատելու համար ծնողը դպրոցում լրացնում է համապատասխան դիմումի ձևը, որից հետո երեխան գնահատվում է բազմամասնագիտական թմի կողմից եւ որոշվում է նրա կրթական կարիքը: Հատուկ կրթական անհրաժեշտության հաստատման դեպքում, դպրոցն ապահովում է աշակերտի ընդու-

նումը՝ համապատասխան փաստաթղթերի հիման վրա: Գրանցված երեխաների համար փաստաթղթերի ներկայացման ժամկետը 2021 թվականի մարտի 29-ից ապրիլի 24-ն է:

Կրթական կարիքներ ունեցող երեխան կարող է համարվել այն երեխան, որն ունի՝ 1. ֆիզիկական արատներ, 2. մտավոր զարգացման խանգարում, 3. ուսման խանգարումներ (ստորություն եւ/կամ տեսողություն), 5. խոսքի զարգացման խանգարում, 6. վարքային եւ հուզական խանգարումներ, 7. երկարատև հոսպիտալացման անհրաժեշտություն, 8. սոցիալական գործունեությունը պայմանավորված ուսման դժվարություններ, որոնց պատճառով այն ի վիճակի չէ բավարարել ազգային ուսումնական ծրագրի պահանջները, 9. աուտիզմի սպեկտր ունեցող:

Գրանցման երկրորդ փուլը հասանելի կլինի ապրիլի 27-ից մայիսի 11-ը, եւ կգրանցվեն այն երեխաները, ուն քույր կամ

եղբայրը նույնպես սովորում են նույն դպրոցում, ծնողը/խնամակալը /խնամողը այդ հանրային դպրոցի աշխատակից է, ընտանիքից երկու կամ ավելի երեխաներ միաժամանակ մտնելու են առաջին դասարան:

Այս փուլում գրանցումը կատարվում է ծնողների/օրինական խնամակալի կողմից հանրակրթական դպրոցներում ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման հիման վրա: Գրանցումն իրականացվում է հանրային դպրոցի կողմից:

Երրորդ փուլը՝ համընդհանուր գրանցումը, կսկսվի մայիսի 13-ին եւ կշարունակվի մինչև հունիսի 5-ը:

Գրանցումն իրականացվելու է կրթության կառավարման տեղեկատվական համակարգի www.emis.ge պաշտոնական կայքում: Գրանցումն իրականացվում է ծնողի/օրինական խնամակալի կողմից: Էլեկտրոնային եղանակով գրանցված աշակերտի ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերը կներկայացվեն հունիսի 8-ից հունիսի 22-ը: Սահմանված ժամկետներում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում, գրանցումն ավտոմատ կերպով կչեղարկվի:

Չորրորդ փուլը դպրոցներում կիրականացվի հունիսի 24-ից հուլիսի 10-ը: Այս

փուլում թափուր կան ազատ տեղերում կգրանցվեն այն աշակերտները, ովքեր չեն կարողացել գրանցվել առաջին, երկրորդ եւ երրորդ փուլերում, կան ցանկանում են փոխել գրանցումը:

Չորրորդ փուլում աշակերտի գրանցումն ապահովում է հանրային դպրոցը՝ ծնողի/օրինական խնամակալի կողմից ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերի հիման վրա:

Առաջին դասարան ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերը.

\* Սովորողի օրինական ներկայացուցչի դիմումը, որը պետք է ներառի տեղեկություններ օրինական ներկայացուցչի բնակության վայրի եւ հեռախոսահամարի մասին:

\* Աշակերտի ծննդյան վկայականի կան անձը հաստատող փաստաթղթի պատճենը եւ Վրաստանում կացության թույլտվության պատճենը (առկայության դեպքում):

Նախարարությունը ծնողներին հորդորում է ուշադիր ուսումնասիրել գրանցման ժամկետները ու պայմանները, որպեսզի նրանք կարողանան իրենց երեխաներին ժամանակին եւ անխափան կերպով ընդունել դպրոց:

ՄԵԿՆԱՐԿԵՑ ՀԱՄԱՉԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Մարտի 1-ին մեկնարկեց համազգային քննություններին մասնակցության գրանցումը: Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի տեղեկությունները, գրանցումը կանցկացվի միասնական ազգային քննությունների, ուսանողների դրամաշնորհների մրցույթի, ընդհանուր մագիստրոսական քննությունների, ավագ հատուկ մանկավարժների քննության, ինչպես նաև ուսուցիչների առարկայական քննության եւ առարկայական ու մասնագիտական որակավորումների հաստատման համար:

Գրանցումը սկսվել է մարտի 1-ին եւ կտևի մինչև մարտի 31-ի ժամը 18:00-ն: - Գրանցումը կատարվում է միայն էլեկտրոնային ձևով, գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի online.naec.ge կայքում: Քննություններին մասնակցել ցանկացողները պետք է ընտրեն համապատասխան վանդակը եւ հետեւեն իրահանգներին: Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնը հրապարակել է «Ուղեցույց դիմորդների համար» 2021 էլեկտրոնային ժողովածուն:

Տեղեկատուի մեջ ներկայացված է աղյուսակ, որը ցույց է տալիս բարձրագույն ուսումնական հաստատությունների տվյալները, յուրաքանչյուր քննության նշանակված գործակիցները, սահմանված իրավասության սահմանները, ուսման վարձերը եւ այլ մանրամասներ: Տեղեկատուն պարունակում է նաև քննություններին վերաբերող հետևյալ տեղեկատվությունը. Նորություններ, գրանցման ցուցումներ, կրթական ծրագրերի ընտրության, քննության գործընթացի, արդյունքների հրապարակման,

բողոքարկման կարգի, գրանցման եւ պետական դրամաշնորհի ձեռք բերելու կարգի մասին տեղեկություններ: Դիմորդների գրանցման գործընթացն այս տարի նույնպես կիրականացվի մի քանի փուլով. Գրանցման առաջին փուլում դիմորդը պետք է գրանցման վանդակում մուտքագրի անձնական տվյալները, ընտրի քննության քաղաքը եւ ընտրվող առարկաները: Դիմորդները կարող են քննության առարկան, ինչպես նաև քննության լեզուն փոխել կամ ավելացնել մինչև ապրիլի 15-ի ժամը 18:00-ն:

Հիշեցնենք, որ կենտրոնը պատասխանատու է միայն իր պաշտոնական կայքում www.naec.ge եւ Facebook-ի էջում տեղադրված տեղեկատվության համար: Կենտրոնը խնդրում է բոլոր դիմորդներին չվստահել չճշտված տեղեկատվությանը, հայտարարել եւ Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնում:

Խորագրի նյութերը՝ ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՐՉԱԿՈՒՐԴՆԵՐԸ՝ ՄԱՐՏԻ 8-14-Ը ՆԵՐԱՌՅԱԼ

Վրաստանում գարնանային արձակուրդները ինչպես մասնավոր, այնպես էլ՝ պետական դպրոցներում, կընթանան մարտի 8-14-ը ներառյալ:

Հիշեցնենք, որ Վրաստանում աշակերտների մեծ մասը վերադարձել են իրենց դասարաններ, իսկ 12 տոկոսը՝ շուրջ 35 732 երեխա, որոշել է մնալ հեռավար դասավանդման պայմանակարգում: Թեպետ այս ցուցանիշը կարող է փոխվել՝ պայմանավորված աշակերտների եւ դպրոցի անձնակազմի շրջանում կորոնավիրուսի նոր դեպքերի հայտնաբերումից: Այս դեպքում կիրարկվում են կետային սահմանափակումները, երբ կոնկրետ դասարանն անցնում է առցանց ուսուցման:

Վրաստանի կրթության նախարարության տվյալների համաձայն, միայն անցյալ շաբաթ աշակերտների 0,03 տոկոսի եւ դպրոցների աշխատակիցների 0,1 տոկոսի մոտ այստորոշվել է կորոնավիրուս:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ - ՎՐԱՍՏԱՆ

### ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐ ԿՈՂՄԵՐԻՆ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԵԼ ԻՆՏԵՆՍԻՎ, ՈՐՊԵՍՁԻ ԱՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԶԵՁՈՔԱՅՎԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Թբիլիսիում, Օրբելիանինների պալատի նախագահական նստավայրում, Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլու եւ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի հանդիպման ավարտից հետո, վերջինս հայտարարեց, որ Եվրամիությունը կոչ է անում բոլոր կողմերին ինտենսիվ կերպով աշխատել իրավիճակը չեզոքացնելու համար:

- Ինչպես նշեցիք, իմ այցը քաղաքական ճգնաժամի ֆոնին է, երբ ճգնաժամը սրվում է: Սա, իհարկե, անհանգստացնում է Եվրամիությանն ու անձամբ ինձ: Եվրամիությունը կոչ է անում բոլոր կողմերին ինտենսիվ աշխատել իրավիճակը չեզոքացնելու ուղղությամբ, հայտարարեց Շառլ Միշելը ու հավելեց, որ ինքը հանդիպում կունենա վարչապետի, խորհրդարանի նախագահի եւ ընդդիմադիր կուսակցությունների առաջնորդների հետ:

- Ես գիտեմ, որ քաղաքական բանավեճը պահանջում է առաջնորդություն, բոլոր կողմերի ներգրավվածություն: Համոզված եմ, որ Վրաստանը բոլոր հնարավորություններն ունի այս նարտահրավերն ընդունելու համար: Համախմբել ժողովրդավարական հիմքերը ոչ միայն Եվրոպայի միության մեջ, այլ նաեւ նրա ժողովրդավարական հիմքերը՝ մարդու իրավունքները պաշտպանելու, նրանց ցանկությունները կատարելու, քաղաքական կայունություն ստեղծելու համար, որը կամրապնդվի բաց ժողովրդավարությամբ, անկախ եւ ներկայացուցչական դատական համակարգով: Դա կամրապնդի Վրաստանի եւ Եվրամիության հարաբերությունները: Այս նպատակներն արտացոլված են Ատոցիացման համաձայնագրում, որը շատ հավակնոտ է եւ արտացոլում է Եվրոպական կողմի ու Վրաստանի պարտավորությունները, հայտարարեց Շառլ Միշելը:

### ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍԱՎԱՅՐՈՒՄ ԿԱՅԱՑԱՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴՊԻՄՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Խազարածեն («Լեւո»), Շալվա Նաթելաշվիլին («Լեյբորիստներ»), Ջուրաբ Ջափարիձեն («Գիրչի»), ընդդիմության այլ անդամներ:

Հանդիպման ավարտին Շառլ Միշելը հանդես եկավ հայտարարությամբ՝ նշելով, որ նա հպարտ է, որովհետեւ ճիշտ ուղղությամբ կարելու քայլ է արվել: Նրա խոսքով, սա չի նշանակում, որ բոլոր հարցերը լուծվել են, սակայն կարելու է, որ բոլոր կուսակցությունները կողմ են քաղաքական երկխոսության ուժեղացմանը:

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու խոսքով, ինքը քննարկումներ է անցկացնելու իշխող կուսակցության քաղխորհրդի հետ եւ ձեւավորելու է վերջնական դիրքորոշում հետագա քայլերի վերաբերյալ: Վարչապետի խոսքով, Շառլ Միշելը կոչ է արել կողմերին հնարավորինս կարճ ժամանակահատվածում հասնել համաձայնության՝ ի բարօրություն երկրի ու ժողովրդի:

- Շառլ Միշելի կազմակերպած հանդիպումը տեղի ունեցավ շատ կառուցողական մթնոլորտում, մենք այսօր երկխոսություն վարեցինք, քննարկեցինք մի շարք հարցեր, այն տարբերությունները, որոնք ունեն իշխող կուսակցությունը, իշխանություններն ու ընդդիմությունը: Բնականաբար, մենք ունենք սկզբունքային դիրքորոշում որոշ հարցերի վերաբերյալ, որոնց մասին ունենք մեր հիմնավորված կարծիքը, լսել ենք նաեւ յուրաքանչյուր ներկայացուցչի կողմից առաջադրված հարցերն



ու պատասխաններ տվել: Մենք պայմանավորվեցինք, որ երկխոսությունը կշարունակվի: Ես խորհրդակցություններ կունենամ կուսակցության քաղաքական խորհրդի հետ, եւ կծեւակերպեմ հետեւյալ քայլերը: Կցանկանայի ձեզ ասել, որ Եվրոպական խորհրդի նախագահի կոչը, առաջարկությունը, խորհուրդն այն էր, որ հնարավորինս սեղմ ժամկետում մենք բոլորս՝ ընդդիմությունը, կառավարությունը, գտնենք ընդհանուր լեզու, որը լավագույնս կծառայի մեր երկրի ու ժողովրդի շահերին: Մեկ անգամ եւս հայտարարել եմ, որ մենք պետք է գտնենք հնարավորություն, ազգային, ընդհանուր գաղափարներ, որոնք կմիավորեն մեզ, կմիավորեն մեր ժողովրդին, ազգին, հենց դա է մեր երկրին այսօր առավել անհրաժեշտ, ընդհանուր ազգային կոնսենսուս, ընդհանուր ազգային համաձայնություն, հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին եւ հույս հայտնեց, որ ընդդիմությունն աշխատանքը կշարունակի կառուցողական ռեժիմում:

### ԻՐԱՎԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՃԱՌԸ ՄԻՇԵԼԻ ԱՅՅԸ ԶՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ՈՐ ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆԸ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Մում եւ Եվրամիությունում ստեղծված իրավիճակը: Վարչապետը շնորհակալություն հայտնեց Եվրամիությանը համավարակի դեմ Վրաստանին ցուցաբերած զգալի աջակցության համար՝ ընդգծելով պատ-

վաստանյութերի հավասար հասանելիության եւ պատվաստանյութերի արդար բաշխման ապահովման կարևորությունը:

- Շատ կարելու գրույց տեղի ունեցավ Շառլ Միշելի հետ: Նրա այցը հստակ ցույց է տալիս, որ մեր տարածաշրջանը Եվրամիության համար ռազմավարական նշա-

նակություն ունի: Հանդիպման ընթացքում քննարկեցինք հարցերի լայն շրջանակ, ներառյալ՝ օկուպացիան եւ համաշխարհային համավարակը: Վրաստանը շնորհակալ է աջակցության համար եւ բարձր է գնահատում այս գործընկերությունը, հանդիպման ավարտին հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին:

### ԵՐԿՈՒ ՇԱԲԱԹԻՑ ԲՐՅՈՒՄԵԼՈՒՄ ԿԻՄԱՆԱՆ, ԹԵ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԻՆՉՊԻՍԻ ԱՌԱՋՆԵԹԱՑ Է ԳՐԱՆՑՎԵԼ

Վրաստանի նախագահի նստավայրում իշխանության եւ ընդդիմության ներկայացուցիչների հանդիպման ավարտին Եվրախորհրդի նախագահ Շառլ Միշելը հայտարարեց, որ ինքը առաջարկում է Եվրամիության աջակցությունը տարբեր հարցերի շուրջ բոլոր կառուցողական ջանքերն ուժեղացնելու համար:



- Մենք շատ կարելու հանդիպումներ ունեցանք Վրաստանի վարչապետի եւ քաղաքական կուսակցությունների ղեկավարների հետ: Հնարավորություն ունեցանք միմյանց լսել ու տեղեկանալ, որ կան բազմաթիվ խնդիրներ, որոնք պետք է լուծեն քաղաքական գործիչները: Ես առաջարկում եմ Եվրամիության աջակցությունը տարբեր հարցերի շուրջ բոլոր կառուցողական ջանքերն ամրապնդելու համար: Երկու շաբաթ անց, Բրյուսելում մենք կունենանք Վրաստանի հետ Ատոցիացման հերթական խորհրդի նիստը, որտեղ կիմանանք, թե ինչ առաջընթաց է գրանցվել տարբեր հարցերի շուրջ: Հիմնական հաղորդագրությունը հետեւյալն է. Եվրամիությունը պաշտպանում է Վրաստանի քաղաքացիների շահերը: Այս երկրում կան շատ բարդ մարտահրավերներ՝ տնտեսական

աճ Բրյուսելում: Կողմերը գտնում են, որ այդ պահի դրությամբ արդեն որոշակի եզրակացությունների պետք է հանգած լինեն: Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը, ում միջնորդությամբ անցկացվել էր նախօրեի հանդիպումը, հույս է հայտնել, որ երկու շաբաթ անց, Բրյուսելում կգնահատեն տարբեր հարցերի շուրջ գոյություն ունեցող առաջընթացը:

Թեմայի շուրջ հայտարարությամբ են հանդես եկել նաեւ ընդդիմության ներկայացուցիչները, ովքեր հանդիպմանը մասնակցելու պատրաստակամություն են հայտնել:

«Եվրոպական Վրաստանի» ղեկավար Դավիթ Բաբրաձեի խոսքով, հանդիպմանը մշակվել է 6 կետից բաղկացած փաստաթուղթ, որի շուրջ առաջիկա երկու շաբաթների ընթացքում պետք է կողմերը քննարկումներ ունենան եւ հասնեն համաձայնության: Վերջինիս խոսքով, փաստաթղթում խոսքը գնում է նաեւ Նիկա Մելիայի ու Գիրգի Ռուրուայի ազատ արձակման եւ արտահերթ խորհրդարանական ընտրությունների մասին:

«Ռազմավարությունը՝ Աղմաշենեբելի» կուսակցության ղեկավար Գիրգի Վաշաձեն հայտարարեց, որ Ես միջնորդությունն աննախադեպ իրադարձություն է, չնայած չի նշանակում, որ պետք է դադարեցվեն շենքերի արգելափակումներն ու բողոքի ցույցերը, քանի որ դրանք նույնպես նպատակին հասնելու ճանապարհներ են:

«Լեւոյի» ղեկավար Մամուկա Խազարաձեի խոսքով, երկու կողմերն էլ պետք է երկու շաբաթում կողմնորոշվեն, որպեսզի համաձայնության գան ընդդիմության կողմից առաջադրված պայմանների շուրջ:

«Հայրենասերների այլանսի» ղեկավար Իրմա Ինաշվիլու խոսքով, նրանք պետք է համաձայնության գան մոր ընտրությունները նշանակելու, ընտրական համակարգը ու միջավայրը փոխելու վերաբերյալ:

### ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՅՅԵԼԵՑ ԲՈՆԱԶԱՎԹՎԱԾ ԳԾԻ ՄՈՏԱԿԱՅՔԻ ԽՈՒՐՎԱԼԵԹԻ ԳՅՈՒՂ

Մարտի 1-ին Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը այցելեց Ցխինվալիի տարածաշրջանի բռնազավթված գծի մոտ գտնվող Խուրվալեթի գյուղ:

Շառլ Միշելը տեղում ծանոթացավ ստեղծված իրավիճակի հետ: Եվրոպական խորհրդի նախագահը Խուրվալեթի մոտ գտնվող Եվրամիության դիտորդական առաքելության ներկայացուցիչների հետ:

Բացի այդ, Խուրվալեթից հետո

Շառլ Միշելը մասնակցեց Վրաստանում Եվրամիության ներկայացուցչության մոր գրասենյակի բացման արարողությանը եւ ծանոթացավ Եվրամիության կողմից ֆինանսավորվող նախագծերին:

Մարտի 2-ին Եվրոպայի խորհրդի

նախագահ Շառլ Միշելը Վրաստանից մեկնեց Ուկրաինա: Թբիլիսիի օդանավակայանում Եվրոպայի խորհրդի նախագահին ճանապարհեց Վրաստանի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Դավիթ Ջալկալիանին:

